ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Հունվարի 5-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը, որին ներկա էին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար Կ. Դալլաքյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ Յու. Խաչատրյանը, Հ. Սաղոյանը, ՀԿԿ կենտկոմի բաժինների վարիչներ Ա. Մելքոնյանը և Մ. Քոչինյանը:

Ժողովում ՍՄԿԿ կենտկոմի 1983 թ. հունիսյան և դեկտեմբերյան պլենումների ու «Ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջադիմությունն արագացնելու միջոցառումների մասին» ՍՄԿԿ կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների լույսի ներքո Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական հաստատությունների խնդիրների մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Նա ասաց, որ թե՛ ՍՄԿԿ XXV և XXVI համագումարների մշակած կուրսին համապատասխան հանրապետությունում հանրային արտադրությունն ինտենսիվացնելու ուղղությամբ որոշակիորեն մեծացել են ժողովրդական տնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նվաճումների օգտագործման մասշտաբները, բայց և այնպես այդ աշխատանքի կազմակերպումը դեռևս ոչ լիովին է համապատասխանում գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների հետ մեր սոցիալիստական կարգերի առավելություններն իրապես միացնելու կուսակցության առաջադրած խնդիրներին։ Սովետական ողջ ժողովուրդը խոր գոհունակությամբ ընդունեց ՍՄԿԿ կենտկոմի 1983 թ. դեկտեմբերյան պլենումում Յու. Վ. Անդրոպովի ելույթի տեքստում շարադրված դրույթները, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության հետագա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ տված գնահատականները, ինչպես և պլենումի որոշումները։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահությունը, բաժանմունքներն ու ինստիտուտները, շարունակեց Վ. Համբարձումյանը, նոր խնդիրների լույսի ներքո վերլուծելով գիտական հիմնարկների անելիքները՝ վերանայել են գիտահետազոտական աշխատանքների պլանները. ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան կոնկրետացվում են հետազոտությունների ուղղությունները, պրոբլեմները ու թեմաները։ Ակադեմիայի ստորաբաժանումները, կարևոր տեղ հատկացնելով հիմնարար հետազոտություններին, ծրագրել են նաև բազմաթիվ միջոցառումներ, որոնց նպատակն է նպաստել արտադրության մեջ գիտության նվաճումների արագ և լայն ներդրմանը, գիտական ուժերը համախմբել առավել առաջնահերթ պրոբլեմների մշակման գործում։ Միաժամանակ նրանք մի շարք առաջարկություններ են կատարել, որոնց իրականացումը որոշակի ներդրում կլինի հիշյալ խնդիրների կատարման գործում։

Անդրադառնալով հանրապետությունում գիտության զարգացման հեռանկարներին, Վ. Համբարձումյանը նշեց այն խնդիրները, որոնք պետք է իրագործվեն ԳԱ ինստիտուտների, բուհերի և գիտահետազոտական ճյուղային ինստիտուտների աշխատողների համատեղ ուժերով։ Դրանք առաջին հերթին վերաբերում են հաշվողական տեխնիկայի և ավտոմատիկայի զարգացմանը, քիմիայի, ֆիզիկայի և գիտության մյուս ճյուղերում նոր ուղղությունների գծով տարվող աշխատանքներին։ Այդ նպատակով անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել մասնագետ կադրերի պատրաստման ու տեղաբաշխման գործը, անդուլ զբաղվել առանձնապես երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական որակավորումը բարձրացնելու խնդրով։ Հունիսյան պլենումում իր արտասանած ճառում Յու. Վ. Անդրոպովը նշեց, որ հասարակական գիտությունները նույն չափով, ինչ չափով և բնական գիտությունները, պետք է դառնան կուսակցության և ժողովրդի օգնականը մեր հասարակության առջև ծառացած պրակտիկ հարցերը լուծելու գործում։ Զգտելով բարձրացնել հետազոտությունների արդյունավետությունը և գաղափարական նը-պատակասլացությունը, ասաց զեկուցողը, ԳԱ նախագահությունը բաժանմունքների և ինստիտուտների հետ մշակել և հետևողականորեն իրականացնում է ՍՄԿԿ XXVI համագումարի և ՀԿԿ XXVII համագումարի պահանջներից բխող միջոցառումների պլան։ Հունիսյան պլենումի որոշումների հիման վրա այդ պլանը հարստացվել և

ավելի է կոնկրետացվել՝ ընդգրկելով մի շարք նոր պրոբլեմներ։ Այնուհետև Վ. Համբարձումյանը հանգամանորեն անդրադարձավ գիտությունների ակադեմիայում կատարվող տնտեսագիտական հետազոտություններին, նշեց, որ հասուն սոցիալիզմի հասարակության զարգացման և կատարելագործման գիտական պրոբլեմների խոր ու համակողմանի հետազոտման գործում մեծ անելիքներ ունեն պատմաբանները, փիլիսոփաները, սոցիոլոգները, ինչպես և հումանիտար գիտությունների մյուս ճյուղերի ներկայացուցիչները։

Վերջում Վ. Համբարձումյանը ՀԿԿ կենտկոմին, հանրապետության կառավարությանը հավաստիացրեց, որ ակադեմիայի գիտական կոլեկտիվները այսուհետև ևս իրենց ջանքերը կնպատակամղեն կուսակցության առաջադրած խնդիրները իրագործելու համար։

Իրենց ելույթներում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Նալբանդյանը, Բ. Առաքելյանը, Մ. Կասյանը, Գ. Ղարիբյանը, Է. Աֆրիկյանը և Գ. Բուռյանը անդրադարձան հանրապետության գիտական կոլեկտիվների առջև ծառացած անհետաձգելի խնդիրներին, նշեցին, որ բաժանմունքներում միջոցներ են ձեռնարկվել մանրաթեմայնությունը վերացնելու ուղղությամբ, խոսեցին նաև հիմնարար հետազոտությունների հետագա խորացման, գիտության և տեխնիկայի նվաճումները արտադրության մեջ ներդնելու ժամկետների կրճատման, առաջավոր տեխնիկայի լայն արմատավորման, երիտասարդ գիտնականների դաստիարակության անհրաժեշտության մասին։

Փոխվոն ընդունեց ժողովրդական տնտեսության մեջ գիտատեխնիկական առաջընթացի հետագա արագացմանն ուղղված հանձնարարական։

«ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

1983 թ. նոյեմբերին Երևանում կայացավ ՍՍՀՄ ԳԱ «Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության պատմության» կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի և նրա հայկական մասնաճյուղի, ՍՍՀՄ պատմության ինստիտուտի, ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, ՀամԼԿԵՄ Կենտկոմին կից Բարձրագույն կոմերիտական դպրոցի, ՀԼԿԵՄ Կենտկոմի և ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության կազմակերպած համամիութենական գիտական կոնֆերանս՝ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և երիտասարդությունը» թեմայով։ Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին երկրի 12 քաղաքների 42 գիտնականներ, որոնք քննարկման ներկայացրին 31 զեկուցում։

Պլենար նիստը բացեց Յու. Ի. Կորաբլյովը, որն ընդգծեց կոնֆերանսի գիտական ու գործնական մեծ նշանակությունը։ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն իր ելույթում մասնավորապես նշեց, որ երիտասարդության դաստիարակության հարցերը միշտ էլ գտնվել են հանրապետության գիտությունների ակադեմիայի ուշադրության կենտրոնում։ Սովետական հասարակության մեջ կոմերիտմիության դերի մասին խոսեց ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ս. Թոփուզյանը։ Ընթերցվեց նաև կոնֆերանսին ուղղված ՍՍՀՄ ԳԱ փոխ-պրեզիդենտ, ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևի նամակը։

Կոնֆերանսում Վ. Ի. Դեսյատերիկը (Մոսկվա) զեկուցում կարդաց երիտասարդության դաստիարակության գործում լենինյան գաղափարների պատմական նշանակության մասին թեմայով։ Նա անդրադարձավ սովետական պատմագիտության մեջ երիտասարդական կոմունիստական շարժման հարցերին և նշեց առավել քիչ լուսաբանված պրոբլեմները։ Խաղաղության համար երիտասարդական շարժման ակտիվացման գործում պատմաբանների ներգրման մասին խոսեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանը (Երևան)։ Կոմերիտմիության կուսակցական զեկավարության բնույթի և ձևերի մասին զեկուցումով հանդես եկավ Վ. Կ. Կրիվոռուչենկոն (Մոսկվա)։ Ա. Յա. Լեյկինը (Լենինգրադ) իր ելույթում անդրադարձավ երիտասարդության համար բոլշևիկների մրցած պայքարի փորձին։ 1917—1923 թթ. Արևմտյան Եվրոպայում երիտասարդական շարժումների վրա Հոկտեմբերյան հեղափոխության թողած ազդեցության մասին խոսեց Հ. Ա. Ավետիսյանը (Երևան)։ Զեկուցողը նշեց, որ Հոկտեմբերյան հեղափոխության պատմական փորձը հիմք հանդիսացավ Իտալիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում, Դանիայում և Նորվեգիայում հեղափոխական վերելքի համար։

Կոնֆերանսի աշխատանքներն անց էին կացվում սեկցիաներով։ «Կուսակցությունը և երիտասարդությունը, հոկտեմբերյան գաղափարների աղբերությունը» սեկցիայի նիստը բացեց Վ. Գ. Կոլիչևը (Մոսկվա)։ Նրա զեկուցումը նվիրված էր երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ՍՄԿԿ դերին։ Սովետական իշխանության համար մղված պայքարի